

## Ա Ր Ձ Ա Ն Ա Գ Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն ԹԻՎ 3

### ՀՀ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԽՈՐՀՐԴԻ ՆԻՍՏԻ

28 սեպտեմբերի 2012թ.

ք. Կապան

Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզային խորհրդի նիստին մասնակցում էին մարզխորհրդի անդամներ, մարզպետարանի աշխատակազմի կառուցվածքային և առանձնացված ստորաբաժանումների ղեկավարներ, հանրապետական գործադիր մարմինների տարածքային ծառայությունների և մարզային ենթակայության կազմակերպությունների ղեկավարներ, զանգվածային լրատվամիջոցների ներկայացուցիչներ և ՀՀ տարածքային կառավարման նախարարության աշխատակազմի ծրագրերի և զարգացման բաժնի առաջատար մասնագետ Սամվել Միքայելյանը:

Օրակարգում՝

1. ՀՀ Սյունիքի մարզի համայնքների բյուջեների սեփական եկամուտների հավաքագրման և տեղական ինքնակառավարման մարմինների խնդիրների մասին.  
/Զեկուցող՝ մարզպետարանի աշխատակազմի ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչության պետ Ա. Մարոյան/
2. Հացահատիկային մշակաբույսերի բերքահավաքի արդյունքների և աշնանացանի նախապատրաստական աշխատանքների մասին.  
/Զեկուցող՝ մարզպետարանի աշխատակազմի գյուղատնտեսության և բնապահպանության վարչության պետ Ս. Թանգյան/
3. Մարզի տարածքում իրականացվող քաղաքաշինական հրատապ ծրագրերի ընթացքի և առկա խնդիրների մասին.  
/ Զեկուցող՝ մարզպետարանի աշխատակազմի քաղաքաշինության վարչության պետ Ա. Ուստաբաշյան/
4. Տեղեկատվություն 2012թ. սեպտեմբերի 9-ին մարզի համայնքներում կայացած տեղական ինքնակառավարման մարմինների ընտրությունների արդյունքների մասին.  
/ Զեկուցող՝ մարզպետարանի աշխատակազմի ՏԻ և ՀԳՄՀ վարչության պետ Ս. Ավետիսյան/

Մարզխորհրդի նիստը ներածական խոսքով բացեց ՀՀ Սյունիքի մարզպետ Սուրիկ Խաչատրյանը:

Օրակարգի առաջին հարցի՝ «ՀՀ Սյունիքի մարզի համայնքների բյուջեների սեփական եկամուտների հավաքագրման և տեղական ինքնակառավարման մարմինների խնդիրների մասին» զեկուցումով հանդես եկավ ՀՀ Սյունիքի մարզպետարանի աշխատակազմի ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչության պետ Աշոտ Մարոյանը:

Օրակարգի երկրորդ՝ «Հացահատիկային մշակաբույսերի բերքահավաքի արդյունքների և աշնանացանի նախապատրաստական աշխատանքների մասին» զեկուցումով հանդես եկավ ՀՀ Սյունիքի մարզպետարանի աշխատակազմի գյուղատնտեսության և բնապահպանության վարչության պետ Սամվել Թանգյանը:

Օրակարգի երրորդ՝ «Մարզի տարածքում իրականացվող քաղաքաշինական հրատապ ծրագրերի ընթացքի և առկա խնդիրների մասին» զեկուցումով հանդես եկավ ՀՀ Սյունիքի մարզպետարանի աշխատակազմի քաղաքաշինության վարչության Արշակ Ուստաբաշյանը:

Օրակարգի չորրորդ՝ «Տեղեկատվություն 2012թ. սեպտեմբերի 9-ին մարզի համայնքներում կայացած տեղական ինքնակառավարման մարմինների ընտրությունների արդյունքների մասին» զեկուցումով հանդես եկավ ՀՀ Սյունիքի մարզպետարանի աշխատակազմի ՏԻ և ՀԳՄՎ վարչության պետ Սեյրան Ավետիսյանը /կցվում են զեկուցումները և ելույթները/:

Զեկուցումների շուրջ ելույթներով հանդես եկան Քաջարան քաղաքային համայնքի ղեկավար Վարդան Գևորգյանը, Տաթև համայնքի ղեկավար Մուրադ Սիմոնյանը, Սրաշեն համայնքի ղեկավար Գրենյա Աղաբեկյանը, Սյունիք համայնքի ղեկավար Սամվել Սարգսյանը

Մարզխորհրդի նիստում մարզպետ Ս. Խաչատրյանը տեղական ինքնակառավարման համակարգի զարգացման գործում ներդրած ավանդի, համայնքի ղեկավարի պաշտոնում երկարատև և անբասիր աշխատանքի համար Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզպետի շնորհակալագրով պարգևատրեց Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Ներքին Խոտանան համայնքի ղեկավար Կլիմենտ Զաքարյանին, Գեղանուշ համայնքի ղեկավար Կամո Ավանեսյանին, Շիկահող համայնքի ղեկավար Գեղամ Ղազարյանին, Սրաշեն համայնքի ղեկավար Գրենյա Աղաբեկյանին, Դարբաս համայնքի ղեկավար Ռոբերտ Խաչատրյանին, Իշխանասար համայնքի ղեկավար Մարատ Պետրոսյանին, Նորավան համայնքի ղեկավար Լավրենտիկ Ավագյանին, Որոտան համայնքի ղեկավար Գավրուշ Դավթյանին:

Մարզխորհրդի նիստի աշխատանքներն ամփոփեց ՀՀ Սյունիքի մարզպետ Սուրիկ Խաչատրյանը:

ՀՀ Սյունիքի մարզպետ



Ս. Խաչատրյան